

## ՀՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*Մայր Աթոռի Միջնկեդական հարաբերությունների բաժին*

### ՄԱՅՐ ԱԹ-ՈՒԻ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹ-ՈՒԿՈՄԻ ԳԱՇԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

**«Միութիւն ի կարևորս, ազադութիւն յերկրայականս, սէր յամենայնի»**

Հայոց Հայրապետների միջնկեդական գործունեությունը միշտ կարելի է բնութագրել Հայ Եկեղեցու երանաշնորհ Հայրապետներից Ս. Ներսես Շնորհապու (կթղ. 1163 - 1175 թթ.) կողմից սիրված և վերը բնրված գողերով: Այն բնորոշ է նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծավալած միջնկեդական գործունեությանը<sup>1</sup>:

Արդյունաշափ գործունեությամբ լեցուն հինգ տարիներ են անցել Վեհափառ Հայրապետի գահակալության օրվանից՝ հարուստ փաստերով և իրադարձություններով ու բնրկալից պահերով:

Անհնար է Հայ Եկեղեցում գեղի ունեցող ցանկացած միջնկեդական-էկումնիկ գործունեություն առանձնացնել և առանձին դիմել Վեհափառի անձից, կամ Վեհափառի գործունեությունն առանձնացնել Հայ Եկեղեցում գեղի ունեցող միջնկեդական իրադարձություններից: Այս ամենը փոխադրված են: Սա Հայ Եկեղեցու դարավոր ավանդությունն է և ոնի իր պարմական հիմքն ու շարունակությունը:

Ուստի հարկ եմ համարում ընդհանուր զծերով ներկայացնել Հայ Եկեղեցու ծավալած միջնկեդական գործունեության վերջին հինգ տարիների ընդհանուր համայնապարկերը, ուր արդարությունը է նաև Նորին Սրբության գործունեությունն այս բնագավառում:

Նախ ասենք, որ Հայ Եկեղեցուն ևս բաժին են ընկել այն մարդարավերները, որոնց դիմակայում է թերևս ամբողջ քրիստոնյա աշխարհը: Հայ Եկեղեցին, Օրմանյանի բնորոշմամբ լինելով հանդուժողական ոգով լեցուն, մղված քրիստոսի սիրուց ու ավելքարանական պատգամներից և միշտ դրական հարաբերություններ ունենալով քոյլ Եկեղեցիների հետ, փորձում է դիմագրավել արդի աշխարհի մարդարավերներին՝ նաև համագործակցելով քոյլ Եկեղեցիների հետ, հավաքարիմ մնալով Հայ Եկեղեցու Սրբազն ավանդությանն ու ազգակիմն արժեքներին:

Աերջերս նշեցինք Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա (1955-1994) երջանկահիշաբակ Հայրապետի մահվան 10-ամյակը: Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետին հաջորդեց Գարեգին Ա Սարգսյանը (կթղ. 1995-1999 թթ.), ով, ի շարս իր բազում արժանիքների, Հայ Եկեղեցու քանակական դարի խոշորագույն էկումնիսիր աստվածաբաններից էր:

<sup>1</sup> Այս մասին գլուխ նաև՝ «Հարդգևս սարկավագ Մանուկյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի Էկումնիկ գործունեությունը, «Էջմիածին», 2001 թ., թ. 19 35:

Երջանկահիշարքակ երկու Հայրապետները Հայ Եկեղեցուն թողել են Էկումենիկ-միջնակեղական փորձառության հսկայական ժառանգություն, որի շարունակությունն ենք դեսում Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի գործունեությունում՝ այժմյան խնդիրներին համահունչ նոր շնչով ու ոգով:

Միջնակեղական հարցերում Գարեգին Բ Վեհափառի դիրքորոշումը լավագույնս արդարակայի է իր Հայրապետական անդամնիկ կոնդակի հետքայա գողերում. «Գործուն մասնակցություն ունենալ միջնակեղական կյանքում՝ հավաքարիմ համայն աշխարհում խաղաղության պահպանման, ժողովուրդների՝ եղբայրական սիրով համագործակցության մեր Եկեղեցու ավանդներին: Նոր ժամանակների տարաբնույթ մարդարավերների առջև քրիստոնեական քոյլը Եկեղեցիների հետ մեր ջանքերը միավորած, հերթողականորեն իրականացնելու ենք հոգևորի լույսով մարդկության կյանքի իմաստավորման սուրբ առաքելությունը՝ համուն Քրիստոնեական սկզբունքների կենսագործմամբ բարու հաղթանակի և համընդհանուր երջանկության»<sup>2</sup>:

Հայ Եկեղեցու պատմության Միջնակեղական Եջերն իրավես առավել են սրբարանում 1999 թվականից ի վեր և հարգապես 2001 թվականից:

1700-ամյակի փոնական օրերից երեք տարի անց այս մասին նշում է և Վեհափառ Հայրապետը Ֆինլանդիա կապարած իր այցի ընթացքում. «Ավելի քան 35 քոյլը Եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների առաջնորդներ մասնակցեցին Ս. Էջմիածնի հոբելյանական փոնակապարություններին: Նրանց մասնակցությունը մեկ անգամ ևս հասկարեց, որ մի յուրահարուկ կապ գոյություն ունի քրիստոնյա Եկեղեցիների ընդունիքում, վկայեց, որ Ս. Էջմիածնի փոնը տպն է համայն քրիստոնեության համար և մեկ անգամ ևս վկայեց այն ճշմարդությունը, որ «Այդաւես և մենք, թվով շատ, մի մարմին ենք Քրիստոսով, բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք» (Ռում. ԺԲ 5)<sup>3</sup>:

Նշենք նաև, որ համեստությունների օրերին պատմության մեջ առաջին անգամ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էին գրինվում գրեթե բոլոր ավանդական Եկեղեցիների գահակալները, որոնց թվում Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Տույն Օւղափառ Եկեղեցու Պապուարը Նորին Ամենապարզություն Պերոռու Յոթերորդը, Նոյիկ Մալանկարա Եկեղեցու պետք Բասիլեոս Մար Թովմա Երկրորդը, Օուս Օւղափառ Եկեղեցու պետք Նորին Սրբություն Ալեքսի Երկրորդը, Օումին Օւղափառ Եկեղեցու պետք Թեոլիփիստ Առաջին, Անգիկան Եկեղեցու պետք, Քենթքերիի Արքայիսկոպոս Ամենապարիկ դոկտոր Զորջ Քերիին, Դանիայի Լյութերական Եկեղեցու Կոպենհագենի Եպիսկոպոս Էրիկ Նորման Սվենդսենը, Ենչ գլխավոր քարտուղար դոկտոր Կոնրադ Ռայզերը, Ներկայացուցիչներ Օւղափառ, Կաթոլիկ և Բողոքական մի շարք Եկեղեցիներից և Էկումենիկ կազմակերպություններից<sup>4</sup>:

1700-ամյակին իրավես Հոգեգալստրյան խորհուրդ էր հաղորդվել, և այն զարդարվեց Ռումի Սրբազն Քահանայապեր Հովհաննես Պողոս Երկրորդի<sup>5</sup> և նոյն թվականի նոյնմ-

<sup>2</sup> Տե՛ս Հայրապետական Անդամնիկ կոնդակ, «Էջմիածնի», 2000 թ., Բ:

<sup>3</sup> Տե՛ս «Էջմիածն», 2004 թ., Ե:

<sup>4</sup> Դավիթ ստրկավագ Միքայելյան, 1700-ամյակի փոնակապարությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածն», 2001 թ., Թ, էջ 32:

<sup>5</sup> Արթուր ստրկավագ Հովհաննեսիստ, Հովհաննեսիստ, Հովհաննես Քահանայապեր Հովհաննես Պողոս Բ-ի այցելությունը Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածն, «Էջմիածն», 2001 թ., Թ, էջ 53:

թերին Կոստանդնուպոլիսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենասրբություն Բարդուղիմենու Առաջինի այցելություններով<sup>6</sup>:

Ներգագայում այս խորհրդով Հայաստան այցելեցին՝ 2002 թվականին՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Խճանագիոս Առաջին Զաքքան<sup>7</sup> և Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու պետ, Վրեզապիսկոպոս Զուկկա Պատարման<sup>8</sup>, 2003 թ.՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Շենուդա Երրորդը<sup>9</sup>, Վրաց Եկեղեցու պետ Նորին Սրբություն Էլիա Երկրորդը<sup>10</sup>:

Բնական է, որ, չնայած այլայլ արձագանքների, լինեն դրական և թե բացասական, այս այցելությունները Հայ Եկեղեցու միջնեկեղեցական հարաբերությունների կյանքում խթան հանդիսացան որսկական նոր հարաբերությունների ձևավորման համար: Ցուրաքանչյուր այցելություն արձանագրվում էր փոխադարձ հուշագրերի և հոչակագրերի սպորագրությամբ, վարահության մթնոլորդի ամրապնդմամբ և բանակցային նոր գործընթացների սկսմամբ:

Այս ամենի հիման վրա մենք կարող ենք առանց վարանելու հաստափել, որ սա խթանիչ ուժն է միջնեկեղեցական հարաբերություններում և նոր մեկնակետ՝ լի նորանոր հնարավորություններով, որի շարունակությունը այսիր գետնենք ինչպես Հայրապետի, այնպես է նրա կողմից լիազորված հոգևորականների գործունեությունում: 1700-ամյակի հանդիսադրյունները միջնեկեղեցական հարաբերություններում իրավան դարձան Գարեգին Ա երջանկահիշափակ Հայրապետի խոսքերով՝ մեր Եկեղեցում «մի նոր Նողեզալուսփ»:

Նարկ է ավելացնել նաև, որ Հայրապետը ևս իր գահակալության առաջին շրջանից իսկ իր կումնենիկ այցելություններն է կարարում քոյք Եկեղեցիներին՝ հանդիպելով նրանց գահականներին, ընդհանուր Եկեղեցու շահերից բխող, Հայ Եկեղեցու դիրքորոշմանը համապարասխան, փոխընդունելի համաձայնագրեր սպորագրում և համարեղ հայդարարություններ կարարում ի խնդիր եղբայրության, սիրո, աշխարհում խաղաղության և քրիստոնյաների միջև համագործակցության<sup>11</sup>:

Գարեգին Երկրորդի՝ իր գահակալության առաջին դարում քոյք Եկեղեցիների պետքին դպրած առաջին այցելությունը հարկանշական է, որ այցելությունն էր Ուուս Ուղղափառ յաների միջև համագործակցության<sup>12</sup>:

<sup>6</sup> Հովակիմ արևելա Մանուկյան, Կոստանդնուպոլիսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմենու Առաջինի այց Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Քրիստոնեություն Հայաստանում վետական կրոն հոչակման նպագակի փոնսակարություններին մասնակցելու համար, «Էջմիածին», 2001 թ., Ժ-ԺԱ, լ. 5:

<sup>7</sup> Վազգեն սարկավագ Քեսարյան, Անդրեյի և Համայն Արևելյան Կոսորի Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Խճանագիոս Ա Զաքքա Խվասի այց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, «Էջմիածին», 2002 թ., Ժ, լ. 3:

<sup>8</sup> Արթոր սարկավագ Հովհաննեսյան, Ֆինլանդիայի Ավելապարանական-Լյութերական Եկեղեցու Արքակոպոս Յովկա Պատրման Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածին», 2002 թ., Ը, լ. 3:

<sup>9</sup> Գ. Ակերսանյան, Ակերսաներիայի Պապ և Ս. Մարկոսի Աթոռի Պատրիարք Նորին Սրբություն Շենուդա Գ-ի այց Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին, «Էջմիածին», 2003 թ., Ե, լ. 3:

<sup>10</sup> Վազգեն սարկավագ Քեսարյան, Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետ, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Էլիա Բ-ի այց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, «Էջմիածին», 2003 թ., Ե, լ. 12:

<sup>11</sup> Տե՛ս օր. Վեհափառ Հայրապետի այցելությունը Եղիսպոտ և Եթովպիտա, «Էջմիածին», 2000 թ., Ժ, լ. 4. Մուշեղ սարկավագ Հովհաննեսյան, Ն. U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցելությունը Մոսկվա, «Էջմիածին», 2000 թ., Գ, լ. 3:

Եկեղեցու պետք Նորին Սրբություն Ալեքսի Երկրորդին: Փոխադարձաբար Ալեքսի Երկրորդը Հայաստանում էր 1700-ամյակի զինավոր գունակապարությունների օրերին: Բնական է, որ Ռուս Եկեղեցու հետ հարաբերություններում կարևոր դեր է կապարում Ռուսահայոց համայնքը և այդ երկրի պարագում գիտնող Նոր Նախիջևանի և Ռուսասփառնի հայոց թեմը՝ իր երկու կենտրոններով՝ Մոսկվա և Մանկի-Պետքերբուրգ, ինչպես նաև Հարավային Ռուսասփառնի հայոց թեմը:

Այսուամենայինիվ, շար բան է պայմանավորված երկու Եկեղեցիների գահակալների ներկայիս ջերմ հարաբերություններով, որոնք արտահայպում են ընդհանուրի ոգին: Մի շարք բանակցային գործընթացներից և համազործակցությունից զարդ Հայոց Հայրապետը 2000 թվականին ներկա գրնվեց Ռուսահայի Հոգևոր հզորությունը և վերածնությունը խորհրդանշող Ս. Ամենափերկիչ Եկեղեցու օժման արարողությանը<sup>12</sup>:

Ի հասպարումն Հայ և Ռուս Եկեղեցիների բարեկամական հարաբերությունների, վերջերս Ալեքսի Բ Պապիկարքը Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին պավանաբրեց Ռուս Ռուսափառ Եկեղեցու «Ս. Ամերեաս Առաքյալ» բարձրագույն շքանշանով:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Պետքերությունի կենտրոնում գրնվող, Ալեքսանդր Նեվսկու անվան պողոտայի վրա վեր խոյացող հիասքանչ Երկնագույն Մարգարիտ՝ Ս. Կաբարինն Եկեղեցու վերաբացման արարողությունը կապարվեց Նորին Սրբություն Ալեքսի Երկրորդի պատվո մասնակցությամբ: Այս հարաբերություններում, շար երևույթին, իր դերն է խաղում և այն հանգամանքը, որ Վեհափառ Հայրապետն իր վարդապետության շրջանում մեկ փարի անցկացրել է Մոսկվայի Հոգևոր Ակադեմիայի ասպիրանտուրայում, Սերգիև Պուսադում (նախկինում՝ Զագորյուկ), ուր մինչև այժմ հիացմունքով նրան հիշում են այսօրվա դասախոսները՝ Նորին Սրբության ժամանակի դասընկերներից շաբերը:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ 2000 թվականի փետրվարի 29-ից մարտի 3-ը կապարված Հայրապետական հիշյալ այցելության ընթացքում համաձայնություն է ձևոք բնորվել, որպեսզի Հայ Եկեղեցու միաբաններն ուսանեն Ռուս Ռուսափառ Եկեղեցու ասրբածարանական հասպարություններում:

Այս ոգով էր մղված նաև այն բանակցային գործնթացը, որ Ռուս Եկեղեցու հետ սկսվեց 2000 և 2001 թվականներից<sup>13</sup>: Բանակցային գործնթացներից ու երկու Եկեղեցիների միջև երկխոսությունից բացի, Վեհափառ Մոսկվա է այցելում և Անդրկովկասի կրօնական առաջնորդների հանդիպումներին մասնակցելու, որոնցից վերջին քառակողմ բանակցությունները Հայաստանի, Ռուսասփառնի, Վրասփառնի Եկեղեցիների պետքերի և Աղքաղջանի կրօնապետի միջև գեղի ունեցավ 2004 թվականի մարտին Ռուս Ռուսափառ Եկեղեցու Սուրբ Դանիլիովյան վանքում<sup>14</sup>:

<sup>12</sup> Տե՛ս Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մոսկվայի և Համայն Ռուսիոն Պապիկարքը Ն.Ս. Ալեքսի Բ-ի նախագահությամբ գլուխ ունեցավ վերաբարորդումը Մասկով Պետքերությունի Ս. Կաբարինն Եկեղեցու, «Էջմիածին», 2000 թ., Է, էջ 3, և Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մոսկվա, «Էջմիածին», 2000 թ., Թ, էջ 3:

<sup>13</sup> Գ. Ալեքսանյան, Ռուս Ռուսափառ և Հայ Առաքելական Եկեղեցիների միջև ուղղակի բանակցությունները՝ իրականացնելու նն դառնում, «Էջմիածին», 2000 թ., Է, էջ 107:

<sup>14</sup> Գ. Ալեքսանյան, ԱՊՀ երկուների միջկրուսական խաղաղադրական ներկայացուցական ներկրորդ համա-

Հարաբերությունները գնալով ընդլայնվում են և մնացյալ Ռողակատ Եկեղեցիների հետ: Վեհական Հայրապետը Բուլղարիա և Ռումինիա կափարած իր հովվապետական այցելությունների ընթացքում առանձին հանդիպումներ է ունեցել Ռումին<sup>15</sup> և Բուլղար<sup>16</sup> Եկեղեցիների պետքերի հետ:

Դայ Եկեղեցուն դավանակից Ղափի, Ասորի, Եթովպահայի Թեսահեղո և Վնդիկ Մալանկարա Ռողակատ Եկեղեցիների հետ հարաբերություններում ևս առավել աշխուժացում է նկազմում, որի կարևոր արդահայքություններից է Հայոց Եկեղեցու երիտասարդ միաբանների՝ Եզիապոսի և Սիրիայի վանական-հոգևոր ուսումնական հաստափություններում ուսանելը: Ավելին, մեր Եկեղեցու հավաքավոր գավակներից մի քանիսը եզիապական վանքերում ծեռք են քննում վանական փորձառություն՝ նպարակ ունենալով իրենց ուսանածը ներդնել մեր Եկեղեցում վանականության վերազարդումից գործին:

Այս հարաբերությունների համար հիմքերն ամրապնդել է Հայոց Հայրապետը, և բոլորն էլ հեռանկարային են: Այս ողին դրսորված էր Վեհական Հայրապետի այն խոսքերում, որոնցով նա ողջունում էր Ս. Մարկոսի՝ Ղափի Եկեղեցու 117-րդ օհակակալին. «Զերդ Սրբություն, մեր երկու Եկեղեցիների փոխարաբերությունները նոր որակ սրբացան հափկապես վերջին հիմնայակում, մեր երջանկահիշագակ նախորդմերի՝ Վերսանդրիայի Վյուրեն և Վազգեն Ա ու Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետների օրոք: Այդ գործում մեծ է հափկապես Զերդ Սրբության դերն ու ներդրումը: Այսօր մեր Եկեղեցիները և մեր ժողովորդները կանգնած են նոր խնդիրների առջև. աշխարհը փոխվում է օրեցօր, փոխվում է արժեքների համակարգը, գլոբալիզացիայի և գիրական նոր նվաճումների հերթանքով փոխվում է շաբ ժողովորդների ու նաև որոշ Արևմտյան Եկեղեցիների աշխարհայացքը: Քրիստոսի վարդապետությունը, սակայն նոյնն է երեկ, այսօր և հավիպյան:

Ինչպես, սակայն, անել, որ մեր հավաքքը դիմագրավի աշխարհի այսօրվա մարդակրանքներին: Սա մի երամայական է, որ թելադրում է մեզ Էլ ավելի սերդացնել մեր համագործակցությունը:

**Զերդ Սրբություն,**

Վստահ ենք, որ Զեր այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին մի նոր լիցք պիտի հաղորդի մեր երկու Եկեղեցիների և մեր երկու ժողովորդների դարավոր եղբայրությանը՝ մեր Տիրոջ՝ Վիստուի Քրիստոսի զիսավորությամբ մի հոգ և մի հովիկ գիրակցությամբ:

Ժողովը, «Էջմիածին», 2004 թ., Բ, լ.9 5: Առաջինը գլւն Գ. Ալեքսանյան, Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի և Աղբյուջանի հոգևոր առաջնորդների հանդիպումը և Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի և Աղբյուջանի կրոնավավերի խաղաղաբարական Ուժերձը, «Էջմիածին», 2003 թ., Ժ-ԺԱ, լ.9 18, 25:

<sup>15</sup> Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ռումինիա, «Էջմիածին», 2000 թ., Ձ, լ.9 12:

<sup>16</sup> Արթուր սարկավագ Կարապետյան, Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Բուլղարիա և Բուլղարիայի թմ, «Էջմիածին», 2002 թ., Ձ-Է, լ.9 3:

Փառք Տիրոջը, որ Քրիստոսած այս Սուրբ Տաճարում միասին աղոթում ենք վասն աշխարհի խաղաղության և մեր ժողովուրդների բարօրության ու հավաքավոր անսայրաքլյանցի<sup>17</sup>:

Ճենուդա Երրորդ Պատրիարք Ա. Էջմիածին կարարած այցելության ընթացքում, հավաքավ պաշտոնական միջոցառումների, երկու Հայրապետերի կողմից սփորագրվեց մի հոչակագիր, որով ամրագրվում էր մինչ այդ ձեռքբերվածը և մարդնանշվում համագործակցության այն ուղին, որով առաջնորդվելու են քոյլ Եկեղեցիները:

Ինչպես համարել այս հոչակագրում է ասվում «Մենք պարբավորվում ենք առավել գեսանեի և շոշափելի ձևով սերդացնելու Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ընդունիքին պարկանող մեր երկու Եկեղեցիների համագործակցությունը՝ ներգրավվելով գեղական, շրջանային և համաշխարհային մակարդակներում կազմակերպված կումենիկ շարժման մեջ, ակդիվ գործունեություն ծավալել՝ դիմագրավելու մարդաբավերները այնպիսի հերձվածների, ինչպիսիք են Եղովայի Վկաները, Արքենքիսաքները, Նեսդորականները, Մորմոնները և այլ հերձվածներ, որոնք վկանգավոր են Եկեղեցու համար: Մեր ընդհանուր խնդիրն է նաև դիմագրավել ժամանակակից աշխարհի նոր մարդաբավերները, որպես կյանքի ծայրահեղ գեղագույն հորապես ազդում են մարդկանց հոգևոր, բարոյական և հասարակական կյանքի վրա:

Դպրի Ուղղափառ Եկեղեցին ջերմորեն շնորհավորում է Հայ Առաքելական Եկեղեցուն Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի օճախ 1700-ամյակի հանդիսությունների առիթով:

Մենք խրախուսում ենք առավել մեծ համագործակցություն սկսելու գաղափարը քրիստոնեական դասրիարակության, կիրակնօրյա դպրոցների, երիտասարդական հանդիպումների և գործունեության, ինչպես նաև ասրբածարանական կրթության ասպարեզներում ուշադրության կենդրում պահելով մեր երկու Եկեղեցիների կննդանի ավանդությունները: Ուսանողների և ասրբածարանության դասախոսների փոխանակումը մեր ասրբածարանական դպրոցների հրադապ առաջադրանքներից մենք ենք: Ուրաքանչ ապացույց, երկու հայ հոգևորականներ պատրաստվում են մեկնել Եզիդիզո՞ն մի քանի դարի վարի վաճական կյանքով ապրելու, ուսումնասիրելու դպրերեն և արաբերեն, ինչպես նաև Դպրի Ուղղափառ Եկեղեցու կենդանի ավանդությունը:

Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցանկություն հայդնեց ներկայացուցիչներ երավիրել Արևելյան Ուղղափառ Ընժանիքի Եկեղեցիներից՝ հանդիպելու Ս. Էջմիածնում և միասին քննարկելու համագործակցության եզրերը՝ որպես միևնույն քրիստոնեական ուղղափառ հավաքըն ունեցող Եկեղեցիներ ...»<sup>18</sup>:

Կաթոլիկ Եկեղեցու հետ հարաբերություններում ևս մեծ առաջնթաց է նկարվում: Վեհափառի 2000 թվականի այցելությունը Հռոմ<sup>19</sup> և Հռոմի Սրբազն Քահանայապետի փո-

<sup>17</sup> Գ. Ալեքսանդրան, Ալեքսանդրիայի Պապ և Ս. Մարկոսի Աթոռի Պատրիարք Նորին Սրբություն Շնուտագալ Հայոց Կաթողիկոսը ցանկություն հայդնեց ներկայացուցիչներ երավիրել Արևելյան Ուղղափառ Ընժանիքի Եկեղեցիներից՝ հանդիպելու Ս. Էջմիածնում և միասին քննարկելու համագործակցության եզրերը՝ որպես միևնույն քրիստոնեական ուղղափառ հավաքըն ունեցող Եկեղեցիներ ...»<sup>18</sup>:

<sup>18</sup> Տիւ նոյեմբ, էջ 9-11:

<sup>19</sup> Տիւ Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Հռոմ և Ս. Գրիգոր Լուսավորիչ մասունքների վերադարձ Հայաստան (Ձեռնութագալ է նաև «Միացյալ հաղորդագրություն Հովհաննես Պողոս Ա Պապի և Գարեգին Բ Կաթողիկոսի միջնորդ»), «Էջմիածն», 2000 թ., ԺԱ, էջ 4:

խաղարձ այցելությունը Հայաստան 2001 թ. խթան հանդիսացան լուրջ համագործակցության հիմքեր սպեղծելու նաև թեմերում և Սփյուռքում:

Պաշտոնական հոռմի հետք հարաբերություններում Հայ Եկեղեցու, նրա դարավոր պատմության և ներկայիս հանդեպ, որպես հարգանքի դրսորում, կառուցղական հարաբերություններին իր նպաստը է քրուու Անդրկովկասում Պապական Նվիրակ, հայագեր-ասդվածարան Գերաշնորհ Կղաույին Արքեպիսկոպոս Գուշերությին:

2003 թվականի օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին Մայր Աթոռի հյուրն էր ԱՄՆ Կաթոլիկ Եկեղեցու Եպիսկոպոսական Խորհրդի նախագահ Կարդինալ Ջելլերի գլխավորած Եկեղեցական պարփակությունը, որին ուղեցում էին Հայ Եկեղեցու ԱՄՆ Արքեպիսկոպության մեջի Ամերիկայացուցիչները<sup>20</sup>: Այս առիթով նաև հիշարքակելի է 2002 թվականի օգոստոսին ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի պարփակության այցը Մայր Աթոռ՝ այս կազմակերպության նախագահ Ռ. Էղքարի և Կաթոլիկ, Հայ, Եպիսկոպոսական Եկեղեցիների ներկայացուցիչների հետ միասին, որոնց դերը հագլաւացնելու մեջ էր Երուսաղեմում Հայ Եկեղեցու կալվածքների հետ կապված 2002 թվականի խնդիրները լուծելիս, ի նպաստ որի արձագանքի ներքեւ բոլոր Եկեղեցիները<sup>21</sup>:

ԵՇԽ-ի և ԵԵԿ-ի հետ զարգանում են հարաբերություններ, որոնք ընթանում են բնականոն հունով: Վեհափառ Հայրապետի այցելել է ԵՇԽ-ի Ժնևյան Էկումենիկ կենտրոն: Նախադրյաներ են սպեղծվել ավելի արդյունավետ համագործակցության, որոնք բարեկային մնում են հեռանկարային, և որոնք պիտի ամրապնդվեն Հայ Եկեղեցու ներկայացուցիչների գործունեությամբ<sup>22</sup>:

Անգլիկան Եկեղեցու հետ ևս Հայոց Հայրապետի օրինությամբ պահպանվում են բարեկամական հարաբերություններ: Այս Եկեղեցու հետ Հայ Եկեղեցին գլուխում է բամակցությունների մեջ, որպես անդամ Դիմ Արքեպիսկոպոս Ուղղափառ Եկեղեցիների:

Հայ Եկեղեցին, ի թիվս այլ Բողոքական Եկեղեցիների, վերջերս սկսել է հարաբերությունները ընդլայնել Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու հետ, համահունչ 1700-ամյա գոնակաբարությունների միջնեկեղեցական ոգուն, որն արդահայրվեց 2002 թ. Ֆին Եկեղեցու պետ Արքեպիսկոպոս դր. Թուկլա Պաարմայի և 2003 թվականին Վեհափառի փոխադարձ այցելություններով: Ըստիանուր համայնապատկերի մեջ սա առաջին դեպքն է Հայ Առաքելական և Ֆին Ուղղափառ Եկեղեցիների պետերի նման փոխայցելության:

Փխադարձ այցելության ընթացքում Վեհափառը նշեց, «Մենք երջանիկ ենք, որ Ֆինլանդիայի Ավելարանական-Լյութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս Գերաշնորհ Թուկլա Պաարմայի հրավերի միջոցով Բարձրյալն Ասդված Մեզ այս շնորհն ընծայեց՝ Մեր հոգևոր եղբայր և Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Գերաշնորհ Լեռ Արքեպիսկոպոսի և իր հավաքացյալ հոգի հետ գրնվելու այսքեղ՝ այս պարմական Տաճարում և Մեր

<sup>20</sup> Տև Ռ. Մկրտչյան, Կաթոլիկ Եկեղեցու ԱՄՆ բարձրաստիճան հոգևորականների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, «Էջմիածին», 2003 թ., թ. 1, էջ 3:

<sup>21</sup> Տև Հովհակիմ արեւադաւագ Մանուկյան, ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի և Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսի Ամերիկայացուցիչները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, «Էջմիածին», 2002 թ., Ը, էջ 13:

<sup>22</sup> Գարնգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Շվեյցարիա և Անգլիա, «Էջմիածին», 2001 թ., Բ:

աղոթքները երկինք վերառաքելով՝ խնդրելով Տիրոջը ամուր և անսասան պահել Իր Սուրբ Եկեղեցին և շնորհել աշխարհին խաղաղություն և մարդկանց՝ եղայրություն»:

Այս հոդվածի շրջանակում կցանկանայինք անդրադառնալ նաև միջնեկեղեցական և էկումենիկ այս ժողովներին, որոնք գեղի են ունեցել Մայր Աթոռում:

Վեհափառ Հայրապետի օրինությամբ, Մայր Աթոռի Միջնեկեղեցական հարաբերությունների բաժնի գործուն մասնակցությամբ և քոյլ Եկեղեցիների ու էկումենիկ կազմակերպությունների հետ համաձայնությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները:

1. 2000 թվականի սեպտեմբերին «Քրիստոնեություն և Իրավունք» խորհրդաժողովը:
2. 2001 թվականի մայիսի 28-ից հունիսի 4-ը Ծաղկաձորում գեղի ունեցավ Եվլուսական Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի և ԵՆՍ «Հավաքը և Կարգ» հանձնախմբի հանդիպումը:
3. 2001 թվականի հունիսին Ծաղկաձորում գեղի ունեցավ «Կորած Մարգարի որոնումներում» թեմայով Արևմոյան ու Արևելյան վանականների հանդիպումը:
4. 2002 թ. նոյեմբերի 5-10-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գեղի ունեցավ Անգլիկան-Արևելյան Օղջապիառ Միջազգային Հանձնախմբի առաջին հանդիպումը Քրիստության վերաբերյալ:
5. 2002 թվականի նոյեմբերի 11-13-ը Ծաղկաձորում գեղի ունեցավ Երիտրասարդական մի խորհրդաժողով, որի թեման էր «Եկեղեցին և Երիտրասարդությունը Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներում»:
6. 2003 թ. սեպտեմբերի 8-13-ը Ծաղկաձորում գեղի ունեցավ «Կովկասի Եկեղեցիները և նրանց իրավունքը» միջազգային գիրածողովը:

Այսինքն կցանկանայինք վկայակոչել նաև Վեհափառ Հայրապետի գործունեությանը և ըմբռնումներին այնքան բնորոշ հետքյալ միտքը՝ հայրնած բանավոր մի գրույցում Սևանի Վազգենյան Դպրանոցում 1996 թվականին, ուսանողների հետ ոչ պաշտոնական մի հանդիպման ընթացքում, Նոոմից Հայ Եկեղեցու պատվիրակության վերադարձից հետո:

Ասված այդ խորքերը հանգում էին այն մտքին, որ մենք հարգում ենք բոլոր Եկեղեցիներին՝ հարգում ենք փոխադարձարար ակնկալելով պատրասխան հարգանք, վսրահություն, համագործակցության ոգի, և չենք հանդուրժում այն երևույթները, որ ուրինահարում են մեր արժեքները:

Յուրաքանչյուր պաշտոնական այցելության ավարտին, Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելած ամեն հոգևորական և օդար Եկեղեցու պետք բաժանվում է որպես բարեկամ դպավորության հայկական հյուրընկալությունից, Հայ Եկեղեցու գահակալի բարի, ջերմ, մագիստր և քրիստոնեավայել ընկերակցությունից և ավելարանական մաքուր ոգու դրսնորումից: